

Մամլոյ Հաղորդագրութիւն՝

Բռնութեան գործողութիւնները սաստկանալուն և Քի Մոնի նախաձեռնութիւնը դէպի Սուրիա զէնքի մատակարարման արգիլման շուրջ:

Շարունակուելով քաղաքական լուծումի բացակայութիւնը՝ վարչակարգին յամառութեան և սնտնացումն ու անլրջութիւնը միջազգային հասարակութեան վերսկսելու քաղաքական գործընթացը հիմնուած ժընեի յայտարարութեան վրայ, Սուրիոյ քաղաքներուն ու ասաններուն մէջ տեղի կ'ունենայ վերընթաց բռնութեան գործողութիւններ զինեալ հակամարտութեան կողմերուն կողմէ, ուր տարբեր շրջաններ ենթարկուեցան ումբակոծումի Սուրիոյ կանոնաւոր բանակին օդանաւներէն՝ միջազգայինօրէն արգիլուած պայթուցիկ տակառներով, յատկապէս տեղահանուածներու գաղթակայան մը Յորդանանի սահմաններուն մօտ, որուն զոհ գնաց մօտաւորապէս քսան քաղաքայիններ՝ մեծամասնութիւնը կիներ և փոքրիկներ: Ինչպէս նաև, երկրին տարբեր շրջաններու մէջ տեղի ունեցաւ ահաբեկչական պայթումներ թակարդուած ինքնաշարժներով և ռումբերով, այդ թուում, պայթեցաւ թակարդուած կառք մը Համայի Ալ Հուրա գիւղին մէջ, որուն զոհ գնաց մօտաւորապէս 38 անձեր՝ մեծամասնութիւնը քաղաքայիններ, այդ թուում փոքրիկներ, ինչպէս տեղի ունեցաւ բազմաթիւ նման պայթումներ Հումսի գիւղաբնակ շրջաններուն և երկրին հիւսիս-արեւելք գտնուող Քահթանիէ (Դըրպէ Սպիի) քաղաքին մէջ, որուն զոհ գնաց տասնեակ քաղաքայիններ:

Ազգային Համակարգող Մարմինը կը դատապարտէ բռնութեան գործողութիւններուն սաստկացումն ու շարունակութիւնը բոլոր կողմերէն և յատկապէս քաղաքայիններուն սպաննութեան գործողութիւնները, կոպտօրէն խախտելով միջազգային մարդկային կանոնը, ինչպէս նաև կը վերահաստատէ թէ՛ միակ ելքը երկրին իր ճգնաժամէն Սուրիական բոլոր կողմերուն համաձայնութիւնը նստելու բանակցութեան սեղանին շուրջ, ժընեի յայտարարութեան հիման վրայ, միջազգային ու տարածաշրջանային հովանաւորութեամբ: Այս շրջանակին մէջ, Համակարգող Մարմինը կ'ողջունէ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին կոչը Ապահովութեան խորհուրդին, որպէսզի հրապարակէ բանաձեւ մը կ'արգիլէ զէնքի մատակարարումը հակամարտութեան բոլոր կողմերուն Սուրիոյ մէջ, և կը հրաւիրէ իրեն ղիտարկելու Համակարգող Մարմնի առաջարկին հրապարակելու բանաձեւ մը Ապահովութեան խորհուրդէն, որ կը դնէ ոչ Սուրիացի բոլոր զինեալները միջազգային օրինականութիւնէն դուրս, ինչպէս նաև Համակարգող Մարմինը կոչ կ'ուղղէ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարին, որպէսզի չ'ուշանայ նշանակելու նոր յատուկ ներկայացուցիչ մը իրեն Սուրիոյ մէջ, վերակենդանացնելու քաղաքական գործընթացը, որը կ'ուղղէ ճգնաժամին աւարտը:

Ողորմութիւն նահատակներուն և ապաքինում վիրաւորներուն

Դամասկոս, 19/06/2014

Ազգային Համակարգող Մարմին - Տեղեկատուական գրասենակ